

ՏԱԶԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՑԵՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 9 ՅՈՒԼԻՍ 1911

ԹԻԻ 26

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կա՞յ Աստուած

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Ս. Եփրեմ (Բ.)

Հայ լեզուն

Հայ եկեղեցականությունը

Լքուած վանք մը

ՅՈՒԼԻՍ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՍ. — Առաջին Գրիստոնեա-
ներու ժամանակուան պատմություն (Շար.)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան լուրեր

Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Գ. ԳԱՊՊԵՆՃԵԱՆ

ԽԱԶԻԿ Յ. ՍԱՐԱՃԵԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՔՀ. ՊԾՂԱՐԵԱՆ

ՄԿՐՏԻԶ ՔՀ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԼԷՈՆ ԹՈՂՍԹՈՅ

«ՏԱԶԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
ղիմել առ Զարմայր Բանանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեշիկթաշ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده «داجار» غزتهسى مديرى باباس زارماير افندى

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktaché, Eglise Arménienne.



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 9 ՅՈՒԼԻՍ 1911

ԹԻԻ 26

ԿԱՅ ԱՍՏՈՒԱԾ

Բ. (*)

Կայ Աստուած. — Այո՛, աշխարհի իրա-
ւէ կան գոյութիւնը զայդ կը յայտարարէ:

Ընդհանրապէս ընդունուած է թէ ո
եւ է գոյացութիւն կա՛մ սկիզբ մը ունե-
ցած ըլլալու է կա՛մ յաւերժութենէ մը
գոյացած: Ան՝ կա՛մ ինքն իր պատճառաւ,
եւ կա՛մ ուրիշէ մը գոյացած պէտք է ըլ-
լայ: Ուրիշ խօսքով, կա՛մ ի պատճառե
գոյացած է կա՛մ դիպումաւ: Հետեւաբար,
ան որ գոյութեան սկիզբ մը ունեցած է,
իւր գոյութիւնը իրմէ նախագոյ բանի մը
կը պարտի, որն որ, ինքնիրմով, բաւա-
կան պատճառ մըն է արգասաւորեալ
արդիւնքի մը: Ամէն սկիզբ, ամէն եղելու-
թիւն, ամէն արգասիք պատճառ մ'ունե-
նալու է, — բաւարար եւ համարժէք
պատճառ մը:

Արդ, ինչպէս Փրօֆ. Ֆլայնթ, իւր Աստ-
ուածութիւն անուն հատորին մէջ, տիե-
զերքին համար կ'ըսէ. — «Դիտութիւնը
օրէ օր, տարուէ տարի, եւս քան զեւս

կ'իմանայ թէ ան՝ (= տիեզերքը) արգա-
սիք մըն է: Դիտութեան աճումը՝ մեծ
գործակցութեամբ՝ պարզապէս այն ապա-
ցոյցներուն տարածումն է թէ տիեզերքը
արգասիք մըն է» — ուրիշ խօսքով, տիե-
զերքը սկիզբ մը ունեցած է: Յուշուած
է թէ, ամէն հիւլէ «արուեստական նիւթ
մըն է» եւ, ան՝ Սըր Ճօն Հէրշէլէն վկա-
յութիւն բերելով, կ'աւելցնէ թէ «անոր
(նիւթին) յաւիտենական եւ ինքնագոյ
ըլլալուն գաղափարը հերքուած է»:

Այս ճշմարտութիւնը հաստատուած է
նաեւ Անգլիոյ ամենահոյակապ գիտնական-
ներէն միոյն կողմէ: Սըր Օլիվըր Լօճ,
Պըրմինկէմի համալսարանին տնօրէնը,
վերջերս նշանաւոր բանախօսութիւն մը
ըրաւ, քաղաքապետարանին մէջ, ուր կը
նախագահէր Մր. Ճօզէֆ Չէյմպրլէն: Իր
նիւթն էր՝ Միակ սկիզբը. — Բատիումը,
եւ պատմեց յոյժ շահեկան եւ ծանրա-
կշիռ վճիռներ, գիտութեան եւ ընտելեան
վրայ: Հիւլէնեւ վրայ խօսելով, ըսաւ.
— «Անոնցմէ չատեր, իբրեւ հաստատուն
մարմիններ կը կարծուէին, բայց հաւանօ-
րէն, անոնցմէ եւ ոչ մին իրապէս եւ յա-
ւիտենապէս հաստատուն էին: Նիւթա-
կան եւ ոչ մէկ բան տեւական է: Միլիո-
նաւոր ու միլիոնաւոր, այո՛, եռիլիոնաւոր
տարիներ կրնան տոկալ, բայց տոկաւ կը

(*) Ա. յօդուածը տես Թիւ 21:

փոխուին ոչ միայն պարզ տեսակները, այլ մինչև իսկ հիմնական քարերը Հիւլէները փշրուող եւ քայքայուող են, Ամենակարեւոր կէտն էր նիւթին յարափոփոխութեան, տարբերութեան փոփոխականութեան յայտնութիւնը, եւ նիւթական հիւլէներու՝ փշրուելու եւ մաշելու ենթակայութիւնը» (1)

Այո՛, ան կ'ապացուցանէ ինորոյ թէ, աշխարհ հունաւոր, հպատակ յարափոփոխ, բազմադիմի է, թէ ան փառաւոր արգասիքն է ամենակարող Պատճառի մը որուն վախճանը ոչ ոք կրնայ տեսնել։ — Եւ այդ պատճառը մենք կը կաշենք ԱՍՏՈՒԱԾ։ Բնութիւնը իր բոլոր օրէնքներով, բարեշրջում եւ յեղաշրջում, ոչ այլ ինչ է, բայց միայն անունը արդասիբի մը, որուն պատճառն է Աստուած։

(1) Փրօֆ. Զ. Հ. Տարուին, բարեշրջութեան մեծ վարկածին զաւակը, 1905 թգստոսին Քէյփթաունի մէջ հաւաքուած անգլիական ընկերութեան նախագահական ճառին մէջ խօսեցաւ հիւլէներու բաժանման վրայ եւ ըսաւ. «Անցեալ քանի մը տարուան Լինարտի, Րոնթկէնի, Պէշըրէլի, Քիւրիի եւ իմ պաշտօնակիցներու՝ Լարնօրի եւ Թօմսընի եւ շատ ուրիշներու ելեքտրական հետազոտութիւնները ցուցուցած են թէ հիւլէն անբաժանելի չէ, եւ լոյսի հոսանք մը նետուած է անով շամանդագին յետին կազմակերպութեան վրայ»։ Տարբեր բառերով, ինչպէս փրօֆ. Լ. կը մատնանշէ, «Տարբեր անցելոյն մէջ յաւտեմական եղած չեն, եւ ապացոյց ալ չկայ հաւատալու թէ ապառնիին պիտի ըլլան»։ «Այս տեսակ հետեւութիւն, կ'աւելցնէ ան, բացարձակ ընդդիմութիւն մըն է այն բաներուն, որոնք վերջերս գիտցուեցան տարբերութեան վրայ»։ Յետոյ, փրօֆ. Է. Րէյ, Լանքէսթըր անգլիական ընկերակցութեան 1906ի նախագահը, յայտարարեց նիւթերի նախահական ճառին մէջ. «Այս երկրագունտին տարբարանական տարբերուն տեսականութեան եւ անփոփոխելիութեան վրայ մեր գաղափարը այլեւս քանդուած է, եւ պէտք է տեղի տալ նորագոյն ըմբռնումներու»։ Ասիկա զանազան տեսակէտներով գոհացուցիչ է, որու համաձայն, 1. — Գիտական ապացոյցներով հաստատուած է թէ աշխարհ արդիւնք մըն է եւ զննման առակ, 2. — Գիտականները հետզհետէ Ս. Դրոյ սկզբունքին կուգան, եւ 3. — Կը ջնջուի այն յանախ գովուած փաստը թէ գիտականները յաւիթեմապէս անսխալ են եւ աստուածաբանները յաւիթեմապէս անհիօղ, իբրեւ բանապաշտական գրողներ, ինչպէս որ Արդիական Եկեղեցոյ հեղինակներ այնքան յանդիմութեամբ եւ բացարձակապէս կը հաստատեն։

Մէկը, սակայն, կրնայ ըսել. — Եթէ Աստուած է պատճառը, առաջին ու վերջին պատճառը, ուրեմն անոր ծագման նկատմամբ կրնա՞ք տեղեկութիւն տալ։ Ո՛չ բոլորովին։ Քանզի, որչափ աւելի դէպի ետ մընտուիք, վերջապէս պիտի հարկադրուիք հանդիպելու առաջին Պատճառի մը, ինքնին առանց պատճառի, որ բոլոր միւս պատճառներուն եւ իրերուն պատճառն է։ Ասիկա զգուարմբռնելի է թերեւս, բայց ոչ այնքան զգուարմբռնելի, որքան հաւատալ թէ, տիեզերք՝ անգիտակից զօրութեան մը արգասիքն է, ինչպէս մենք կը ճանչնանք զայն, կամ հիւլէներու զիպուածական գործակցութեան արդիւնքը։

Լորտ Քէլլին, ժամանակակից գիտուններուն ամենամեծը, վերջերս ըսաւ. «Ասկէ քառասուն տարի առաջ հարցուցի Լայպիկի — որ քաղաքին մէջ կը պտտէր — թէ կը հաւատայ թէ խոտերն ու ծաղիկները, զորս կը տեսնենք մեր շուրջը, միմիայն քիմիական զօրութենէ՞ մը առաջ եկած են։ Նա պատասխանեց. — Ո՛չ, այլ եւ հաւատար թէ, բուսաբանութեան հեղինակ մը (գիրք) կը նկարագրէ զանոնք իբրեւ յառաջացում միմիայն տարրաբանական ուժի մը»։ Այս կերպ չենք կրնար հաւատալ այլ կը հաւատանք թէ, տիեզերքի բնութեան յանգումները՝ ամենակարող Զօրութեան եւ կամքի արտայտութիւններն են, եւ թէ ուղիղ ենք իբր մեր պզտիկներուն կը սորվեցնենք երգել, —

Ամեն իրեր լուսափայլ ու գեղեցիկ,

Ամէն արարածներ մեծ ու պզտիկ

Ամէն բաներ հանճարեղ ու հիանալի,

Տէր Աստուած ստեղծեց բոլորը։

VAILLANCE COOK

Թարգմ. Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Սեքսսիա

Յառաջիկայ քիւով կը սկսիմ շարք մը ուշագրաւ յօդուածներու

«ՀՈԳԻԻ ԳՈՅՈՒԹԻԻՆՆ

ՈՒ ՍՆՄԱՀՈՒԹԻԻՆԸ»

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ԵՓՐԵՄ

Բ. (A)

Մեծն Կոստանդիանոսի մահէն աւարի մը վերջը (338), Պարսից Սասանեան Շապուհ Բ. եկաւ պաշարել Նիղիպը, Հռոմայեցւոց մեծ հարուած մը տալու համար, որոնք այս ատեն իրենց իշխանութեան սահմանը մինչեւ Միջագետաց աշխարհը տարածած էին(1): Կոստանդ Ա. Կայսրը (337-350) անկարող գտնուեցաւ Սասանեան աշխարհակալութեան ձգտումներուն դիմադրել, եւ Նիղիպ անձնատուր ըլլալու կէտին հասած էր, երբ աւանդաբար կ'ըսուէր թէ Եփրեմի աղօթքով երկինքէն ճանճ ու գոռելի թափեցան Պարսից բանակին ձիերուն ու փղերուն վրայ, եւ մեծ վնաս հասուցին, որով ստիպուեցաւ Շապուհ թողուլ իր այս աւերիչ ձեռնարկը եւ քաշուիլ սահմանադուխէն անդին(2): Քիչ վերջը Շապուհ նորէն պոչարեց Նիղիպը, եւ ամէն տեսակ հնարքներ բանեցուց, որպէս զի անձնատուր ըլլայ քաղաքը: Այս անգամ Եփրեմի անուցիւն ու դաստիարակը եղող Յակոբ եպիսկոպոս Մծբնեցի պաշարման երկիւղէն զգածուած ըլլալով մեռաւ, որուն գործը յանձնուեցաւ Եփրեմի, որ շարունակեց մնալ Նիղիպի մէջ, եւ իր ստանձնած պաշտօնին մէջ

կատարելագործուել, մինչեւ որ Նիղիպ անձնատուր եղաւ Պարսից Եփրեմ ասկից քաշուեցաւ Պէյք Կարպիս վանքը, ուր ինքզինքը տուաւ Ս. Դրոց ընթերցման եւ ուսումնասիրութեան: Պարսիկներու քրիստոնէութեան դէմ յարուցած հալածանքներէն նեղուելով անցաւ Ամիթ(1). բայց հոս քիչ ժամանակ մը միայն մնաց, եւ հաւանաբար 345ին գնաց հաստատուել Նդեսիա ուր պիտի բացուէր իր առջեւ գործունէութեան ընդարձակ ասպարէզ մը:

Նդեսիոյ մէջ անցուցած առաջին տարիներուն վրայ գրեթէ որոշ տեղեկութիւններ կը պակսին: Ասորի պատմիչները կը կարծեն թէ Եփրեմ իր ընդունած քրիստոնէութիւնը ազատօրէն պաշտելու համար էր որ թողուց իր հայրենիքը՝ Նիղիպ, եւ վերջնականապէս հաստատուեցաւ Նդեսիա, որ իր կեանքին ու ասպարէզին համար ամէն կերպ ապահովութիւն կը ներշնչէր, ըլլալով Հռոմէական նահանգ մը՝ Անտոնինոս Կարակալլա կայսեր գրաւումէն ի վեր (216): Ներկորդ պարագայ մ'ալ. Նդեսիա հաստատուելով պիտի կրնար օգտուիլ Ասորական մտքի կեդրոնը եղող Պարսից Դպրոցի դասախօսութիւններէն, բայց յաջողութիւնը քիչ մը կասկածելի էր գէթ այս վերջին պարագային համար. որովհետեւ կը պակսէին նիւթական պայմաններ՝ որոնք անհրաժեշտ էին իր գաղափարին իրագործման: Եփրեմ ստիպուեցաւ նախ իբրեւ ծառայ վարձքով աշխատիլ քաղաքին բաղնիքներէն մէկուն մէջ, ապահովելու համար իր ապրուստի միջոցները. ապա ուսումնասիրական եւ կրօնական կեանքի եռանդէն մղուած՝ թողուց քաղաքը եւ ընտրեց մենավայր մը՝ Նդեսիոյ Ս. Լեռան վրայ գտնուած վանքերուն մէջ(2): Մինչեւ այս ատեն դեռ չատերուն անձանօթ էր Եփրեմի իս-

(*) Ա. յօդուածը տես Թիւ 24:

(1) Միջագետքը իրարու ձեռքէ խլելու համար մրցում մը բացուած էր Պարսից և Հռոմայեցւոց միջեւ, որ կը սկսի Կոստանդիանոսի մահէն անմիջապէս յետոյ և կը տևէ մինչև Սասանեան Կայսրութեան անկումը (1640): Այս պատերազմներուն միջոցին ուր Միջագետք այնքան վնասներու ենթարկուեցաւ, նշանաւոր հանդիսացան Պարսից կողմէ Շապուհ, Կաւատ, և իր որդին Խոսրով Ա. Նուշիրվան Սասանեան ինքնակալները:

(2) Տես Ապուլֆարաժ «Քրոնիկ Ասորական» էջ 66 ձմեռ. Landt. Anecdota syriaca T. 2 P. 104, Theodoret, Hist. Eccl. 11 P. 26: Ասորի մատենագիրները այս կարգի հրաշքի մը աւանդում լինը վերապահած են Դաստառակին, սրուն կանթեղին մէկ կամիւրը հրդեհով բռնկեցուցած ըլլայ Խոսրով Նուշիրվանի բանակը որ պաշարած էր Նդեսիան (544) Տես Հ. Մ. Զամչեան, Պատմ. Հայոց հոտ. Բ:

(1) Կոստանդ Կայսրէն շինուած 339ին:

(2) Արաբացի մատենագիրներ երեք հարիւրէ աւելի վանքեր կը յիշեն Նդեսիոյ շուրջ: Մ, Ուռ. հայեցի և Մ. Ասորի հազարի կը հասցեն այս վանքերուն Թիւր, որոնց մէջ նշանաւոր եղած է Յէլիլլա անուն վանքը որ քարէ փորուած է, և կը նտնուի Նդեսիոյ Թագալ լեռան վրայ:

կական արժանիքն ու կարողութիւնը, Ծննդոց Դիրքին վրայ գրած իր մեկնութիւնը շուտով ընդարձակեց իր համբաւին ոլորտը, որ Միջագետաց սահմանէն անցնելով հասաւ մինչեւ Կապադովկացոց աշխարհը: Եգեսիոյ մտաւորական չընդհանրելի շուտով ըմբռնեց անոր մէջ պահուած հսկայ տաղանդը, եւ Պարսից դպրոցի վարչութիւնը արժան տեսաւ հրաւիրել Եփրեմը՝ դասախօսելու պաշտօնին: Եփրեմ ուզեց մերժել այս պատուը, խորհելով որ ինքը դեռ պէտք ունի օգտուելու դպրոցին դասախօսութիւններէն, սակայն կ'ըսուի թէ երկնային տեսիլք մը ստիպեց որ ընդունի եղած առաջարկը: Այս շրջանին, ուր դասախօսեց Եփրեմ, շատ փայլուն եղած է Պարսից Դպրոցին համբաւը, եւ իր դասախօսութիւններէն դուրս ժամանակ գտած է հերետիկոսներու դէմ գրի առնել կարգ մը ջատագովականներ, որոնց մէջ կը փայլին իր դրիչն ու տաղանդը. եւ այս շքեղ համբաւն էր որ ամէն կողմէ իրեն քաջեց աշակերտներու ստուար խումբ մը, որոնց մէջ կը գտնուին Զենոբիոս, Իսահակ, Միմօն սարկաւագ եւ ուրիշներ(1):

Հոս խնդիր է գիտնալ թէ Եփրեմ երբ հրաւիրուեցաւ Պարսից Դպրոցի դասախօսութեան, դեռ աշխարհակա՞ն էր, թէ ոչ կրօնական կարգ առած էր: Ինչպէս տեսնուեցաւ, մինչեւ 325 ուր տեղի ունեցաւ Նիկիոյ ժողովը, Եփրեմ դեռ չէր մկրտուած որպէս զի մասնակցէր ժողովին: Ըստ Հ. Գ. Զարբհանէլեանի Եփրեմ սարկաւագ ձեռնադրուած է Յակոբ Մծբնեցի եպիսկոպոսէն, 325-338 տարիներու միջոցին(2). բայց այս ալ լոկ ենթադրութիւն մըն է, քանի որ վաւերական յիշատակութիւններ կը պակսին: Միւս կողմէ Paul Allard կ'ընդունի թէ Եփրեմ երբ Ս. Բարսեղին այցելութեան գնաց Կեսարիա, արդէն

Սարկաւագ տիտղոսը կը կրէր իր վրայ(1), մինչեւ Տիւվալ կը կարծէ թէ Եփրեմ Ս. Բարսեղէն ընդունած ըլլայ սարկաւագութեան աստիճանը: Այս տարբեր կարծիքներուն մէջէն դժուար է շատ ուղիղ ճամբայ մը գտնել. բայց սա ստոյգ է թէ Եփրեմ երբ Ս. Բարսեղի այցելեց, արդէն սարկաւագ էր, բայց ոչ թէ Յակոբ Մծբնեցիէն ձեռնադրուած՝ ինչպէս որ պարագաներն ալ տարբեր կերպով կը հաստատեն, այսինքն Եգեսիոյ Եպիսկոպոսներէն ձեռնադրուած ըլլալ հաւանաբար Աբրահամ եպիսկոպոսէն (346-361) որ տասնընէնգ տարի վարեց Եգեսիոյ եպիսկոպոսական պաշտօնը(2), եւ այս միջոցին էր որ սկսաւ փայլիլ Եփրեմ Պարսից Դպրոցի իր հմտալից դասախօսութիւններով ու գրական բեղուն արդիւնքներով:

360ին աղանդաւոր քրիստոնէութեան դէմ յարուցած բուռն հակառակութիւնները իրենց ծայրայեղութեան աստիճանին հասած էին: Փոքր Ասիա, Միջագետք Կապադովկիա կը տարուբերէին այս խռովայոյզ վէճերէն, սրոնք միշտ Քրիստոնէայ Եկեղեցւոյ ներքին կազմակերպութիւնը տկարացնելու բնոյթն ունէին: Բարդաժան, Արիոս, Մանէս, Մարկիոն իրենց մոլար վարդապետութիւններով շատերուն միտքը թունաւորած ու գայթակղեցուցած էին: Միայն Կեսարացի եղբայրները (Բարսեղ եւ Գրիգոր Նիւստացի), ինչպէս նաեւ Եփրեմ, Ուղղափառներու կողմէն գրչով ու գործքով զինուած ասոնց դէմ կը կռուէին, յաղթանակը շահելու համար: Պայքարը հետզհետէ շահեկան հանգամանք մ'առնել սկսած էր, եւ ուղղափառներու ախոյեանը տեսնելու փափաքը կը ճնշէր Մծբնեցի սարկաւագին կուրծքը, Եփրեմ Թարգմանի մը ընկերակցութեամբ (որովհետեւ Ասորերէնէ զատ ուրիշ լեզու չէր գիտեր) մեկնեցաւ Նդեսիայէն՝ Նպատակը նախ Կապադովկիա երթալ էր. ապա մէկէն կը փոխէ իր ծրագիրը. եւ մեր Վկայասէր Կաթողիկո-

(1) Տես. վատիկանի ձեռագիրը, Zenobius, le diacre Isaac. Simeon, Abraham. հմտ. Testament d'Ephrem, Abba. Abraham, Simeon. Mara & Zenobius:

(2) Տես. պատմ. ընդհ. ազգ. մատեն. էջ 754-755:

(1) S. Basile էջ 272:

(2) Այս եպիսկոպոսը չի նկատուած է խոստովանողաց (Գուրխասայ. Սամունասայ եւ Աբիրայ սարկաւագին) անունով վանք մը որ կը գտնուի Եգեսիոյ Խզալ լեռան վրայ, այժմ բոլորովին աւերակ:

սին պէս, ծովուն եղերքը հասնելով Եզրիպտոս գացող նաւ մը կը գտնէ, եւ քանի մ'օրէն ինքզինքը կը գտնէ Փարաւոններու փառաշուք երկրին կեդրոնը եղող Աղեքսանդրիոյ մէջ, ուր այս ատեն Արիտասականներն ու Ուղղափառները իրարու դէմ լարուած բռնն պայքար մը կը մղէին, եւ շնորհիւ Վաղէս կայսեր ցոյց տուած հոգածութեան ու պաշտպանութեան, Արիտասականները Աղեքսանդրիոյ մէջ մեծամասնութիւն ձեռք բերած, եւ յաջողած էին իրենց հակառակորդ Աթանասի ջանքերը ի գերեւ հանել: Եփրեմ ութ տարի աշխատեցաւ Աղեքսանդրիոյ մէջ, արդիւնաւորելու համար մեծ Աստուածաբանին՝ Աթանասի ջանքերը. սակայն անօգուտ. Մեծն Թէոփոս վերապահուած էր Արիտասականներու մեծ հարուած մը տալու բաղդաւորութիւնը:

Եփրեմ Աղեքսանդրիայէն կ'անցնի Կեսարիա, հաւանաբար 367ին, ուր կը գտնէ իր ցանկալին՝ Բարսեղ, որ իր սրբութեան եւ գիտութեան համբաւով շատերը հրապուրելով իրեն կը քաշէր այս ատեն, որոնք իրենց տուած այցելութեամբ գեղեցիկ ու անմոռաց յիշատակներ կը տանէին իրենց հետ: Ասոնց ամէնքը ճանչնայ միգի համար փափաքելի պարագայ մըն է, կ'ըսէ Paul Allard, Բայց անոնցմէ մէկը միայն կը յիշուի, որ ցեղով Առորի, համբաւաւոր բանաստեղծ Ս. Եփրեմն է (1):

Մասնաւոր կերպով գրի առնուած բերթուածի մը մէջ, զոր Եփրեմ կարդացած է Ս. Բարսեղի ներկայութեան, կը պատմէ իր այս այցելութեան պարագաները (2), ուր նորէն վերհայեցողական

(speculative) գաղափարը զգալիօրէն կը շեշտուի. «Օր մը մինչդեռ հայրենիքիս մէջ կը գտնուէի, կ'ըսէ Եփրեմ, Տէրը իմ վրաս զթալով իր ձայնը լսելի ըրու ինծի, որ զիս կը կանչէր. — «Ոտքի ե'ւ Եփրեմ, եւ իմ խորհուրդներս ճաշակէ»: Կ'ըսեմ անոր՝ անձկութեամբ լեցուած — «Ո՞ւր կից պիտի ճաշակեմ, Տէ'ր» Պատասխան կուտայ ինծի եւ կ'ըսէ. «Իմ թագաւորական տանս մէջ անօթ մը պիտի գտնես (ակնարկութիւն Ս. Բարսեղի համար) որ քեզի սնունդ պիտի տայ»: Այս տեսլիքէն հիացած՝ ելայ եւ մտայ Բարձրեալին Տաճարը, եւ երբ անոր դաւիթը մտայ, հեռուէն դրան նայեցայ եւ տեսայ որ այս ընտրեալ անօթը՝ սրբարանին մէջ կանգնած՝ իր հօտին հիացումը իր վրայ կեդրոնացնելով խորհրդաւոր խօսքերով պնտուած ու ճոխացած էր, եւ ժողովուրդը վարժուած էր ակնապիշ դիտել զայն: Տեսայ յուզուած մտքով մը ամբողջ տաճարը: Տեսայ անոր քաղցր կարեկցութիւնն ու մաքուր աստուածապաշտութիւնը որ ցոյց կուտար որբերու եւ այրիներու: Տեսայ այս սուրբ հովուին արցունքի կայլակները, որով իր աղօթքը մինչեւ երկինք կը բարձրացնէր: Տեսայ այն եկեղեցիները զոր այնչափ խանդաղատունօք կը սիրէր Բարսեղ, ու այնչափ շքեղօրէն զարդարուած ու հոն հաստատած էր սքանչելի միաբանութիւն մը: Վերջապէս տեսայ անոր բերնէն բղխիլը Պօղոսի վարդապետութեանը եւ Աւետարանին օրէնքին, որով զարգարուած կը փայլէր իր ստանձնած պաշտօնին մէջ»:

Եփրեմ կը պատմէ թէ այս խորհրդաւոր այցելութենէն վերջ, Բարսեղ փոխադարձ այցելութեամբ կը պատուէ Ասորի սարկաւազը, եւ թարգմանի մը օգնութեամբ կը հարցնէ անոր. — «Դո՛ւն ես Եփրեմը որ այնչափ սիրով ու յօժարութեամբ հպատակած ես փրկութեան լուծին»: Մօքնեցի սարկաւազը կը պատասխանէ. «Ես այն Եփրեմն եմ որ այնքան խոտոր ընթացքով մը կը յառաջանամ փրկութեան ճամբան»: Կը մօտենայ Բարսեղ, ու գիրկընդխառնելով կ'ողջունեն

(1) Տես Ս. Գրիգոր Նիւսացի՝ Կեանք սրբոյն Եփրեմի հօրն Ասորւոյ, Գլ. ԺԵ.:

(2) Հմմտ. Կոթելլիէ «Յիշատակարանք Հռոմէական եկեղեցւոյ» հատ. Գ. էջ 58: Ս. Բարսեղի մասին Եփրեմի կողմէ գրուած գովեստը միայն յունարէն բնագիրը ունի: Ասորականը կորսուած է սուկայն վաւերացած է, կ'ըսէ Բօլ Ալլար: Հմմտ. Ս. Հերոնիմոս Կեսարիայէն էջ 15: Սողոմէն պատմ. եկեղ. Գ. 16: Կըսեն Թէ Ս. Եփրեմի գործերը իր կենդանութեան ատեն յունարէն լեզուի թարգմանուած, իսկ Եփրեմի Աեսափիա երթալը պատմած է Գրիգոր Նիւսացի որ մեր ըսածը կը հաստատէ, այսինքն պէտք է տեղի ունեցած ըլլայ Բարսեղի եպիսկոպոսութեան սկիզբը, մօտաւորապէս 367ին. որովհետեւ Ս. Բարսեղ և մեր Մեծն Ներսէս Ա. կամօղիկոսը միասին եպիսկոպոս ձեռնադրուած են 366ին Եւսեբիոս Կեսարացիէն:

զիրար: Ապա կը խօսին իրարու հետ, զոր
Եփրեմ կը նմանցնէ ծածկուած սեղանի
մը, ճոխացած ոչ թէ կորստական կերա-
կուրներով, այլ յաւիտենական ճշմար-
տութեամբ: Եփրեմ Բարսեղի վրայ տեսած
իմաստութենէն հիացած՝ կ'ըսէ. «Հայր,
պաշտպանէ զիս ծուլութեան ու անգոր-
ծութեան դէմ. ուղղէ՝ իմ քայլերս ար-
դարութեան շաւղին մէջ. փշրէ՝ սրտիս
կարծրութիւնը. Աստուած զիս քեզի
յանձնեց, որպէսզի հոգ տանիս իմ անձիս
վրայ:» Եփրեմ մանրամասնօրէն կը նկա-
րագրէ այս խօսակցութիւնը, ինչպէս նաեւ
այն պատուական զրուակները որոնք
նշանակելի դարձուցած էին Կապաղով-
կիան, Սեբաստիոյ քառասուն մանուկ-
ները եւն: Սողոմէն կ'ըսէ թէ Բարսեղ
չատ ուրախ եղաւ Ասորի սարգաւազին
ուսնեցած հմտութեան մասին եւ հարցում-
ներ ըրաւ իր յօրինած Վեցօրեակի եւ
Սուրբ Հոգւոյն Ճառի՛ն նկատմամբ(1):

Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒՆ

Ն Ա Մ Ա Կ

Առ յարգելի ԳԱՋՐԻԿ

Տաճարի Մայիս 7ի Թիւ 17 թերթին
մէջ ձեր ինձ ուղղած պատասխանն հա-
ճոյքով կարգացի. անոր մէջ մէկ քանի
կէտեր կան, որոց կը փութամ պատաս-
խանել:

Նախ, շատ ուրախ եմ որ գրական աս-
պարէզին մէջ, ձեր իսկ խօսքով, նորա-
վարժ մը լինելով հանգերձ, բաւական տո-
կուն նկարագիր մը եւ առողջ դատողու-
թիւն մը ի յայտ կ'ածէք, որ գրական մ'են
թէ մերձաւոր ապագայի մէջ մեր զուգ-
նաբեայ բայց լաւագոյն գրողներէն մին
պիտի լինիք:

Կ'ըսէք թէ «Անոնք որ կը ճգնին հաս-
տատել թէ գրաբարին հետ միեւնոյն ժա-

մանակ գոյութիւն ունէր աշխարհաբան
ալ, կամ աւելի ճիշդ է ըսել, կը պնդեն
թէ հին եւ նոր հայերէններն հիմնովին
տարբեր ծագումներ ունին, կարծեմ թէ
տակաւին պէտք ունին ճգնելու, մինչեւ
որ ո՞վ գիտէ քանի՛ քանի՛ տասնեակ տա-
րիներ անցնին եւ արդի հայերէնը ինք-
նիշխանութիւն մը ձեռք բերէ:»

Իմ պատասխանը.

Որ եւ է թաքուն առարկայ յերեւան
ածելու համար եթէ անհրաժեշտ է այդ
առարկային մօտերը գտնուած երեսոյթ-
ները, փաստերն ու ապացոյցներն ի նկատ
առնել, ոչ նուազ անհրաժեշտ է եւ այսօր
խիկ, մեզ զրացի եւ ցեղակից Պարսից դը-
րութենէն լոյս առնել, այն ժողովուրդին
որ մեր լեզուին եւ մեր բարբին վրայ
ազդեցութիւն ունեցաւ ի հնումն. զոր
օրինակ, այսօրուան կիրարկուած պարս-
կերէնի հնչումն ու կերպար տարբեր են
Շիրազ՝ Թէհրանէ, Քիրման՝ Քէշանէ, Քիր-
մանշահ՝ Մէշէտէ, Եզդէ՝ Բէշէտէ, բայց ա-
սոնց ամէնքն ալ պարսկերէն են, տեղ
տեղ միմեանց անհասկանալի ըլլալու աս-
տիճան տարբեր, իրենց ռամկօրէնով, հըն-
չումով եւ աղաւաղումներով: Ուստի կըր-
նանք հետեւցնել որ մեր գրաբար լեզուն
ալ ի սկզբան Հայոց տիրող լեզուն էր
առաւել կամ նուազ փոփոխութիւններով
եւ աղաւաղումներով, ուսկից տեղական
զանազան գաւառաբարբառներն առաջ ե-
կան ի վերջոյ, եւ ասկից յառաջ եկաւ
աշխարհաբարը, շարունակ գրաբարին զի-
մումներ ընելով եւ օգտուելով: Ապա
թէ ոչ Ե. դարուն սկիզբներն հազիւ 40-
50 տարի հանգիստի երես տեսած ատեն-
նին կարելի չէ նոյն իսկ մտքէ անցունել
որ մեր ոսկեղինիկ եւ անմահ գպիրներն
յաջողած լինէին մեր դասական պատուա-
կան եւ կանոնաւոր լեզուն, Հայ դպրու-
թեան Ոսկեդարը կազմելու ի չգոյէ
ի գոյ ամելով, եթէ պատրաստ ատաղձը
չունենային առ ձեռն, ոսկեդար մը, ո-
րուն, ամեն պայմաններ, զիւրութիւններ
եւ չփումներ պատրաստ ունենալով հան-
գերձ՝ 1500 տարիէ ի վեր չի կրցան
հասնիլ ո՛չ էջմիածին ո՛չ Երուսաղէմ,

(1) Ս. Բարսեղ Վեցօրեակի Բ. 6: Հմտ.
«Բանք հոգւոյն սրբոյ» Ժ.

ո՛չ Արմաշ, ո՛չ Վենետիկ ո՛չ Վիեննա, ո՛չ Պոլիս, ո՛չ Տիֆլիս եւ ո՛չ այլուր: Հետեւաբար, առանց ապարդիւն ճիգեր թափելու կաթիք մնալու, կարելի է հաստատել թէ զրաբարի գաւառաբարբառներէն ծնաւ մեր աշխարհաբարը, որ իսկ եւ իսկ գրաբարի զաւակն ըլլալու գրոշմը կը կրէ իր վրայ, եւ պէտք է աւելցնել որ արդի հայերէնն արդէն ինքնիշխանութիւն մը ձեռք ձգած է ըստ բաւականին, եւ ատակ վիճակ մը ունի հետզհետէ զարգանալու եւ ուռճանալու:

Եւ կ'աւելցնէք թէ «Ներկային համար խօսելով պէտք է խոստովանիլ թէ գրաբարէ տեղեկութիւն չունեցող մը կարելի չէ որ հայերէն գիտնալուն վրայ պնդէ»: Ասոր տարակոյս չիկայ. եւ եթէ կը հաճիք, աւելցուցէ՛ք որ լաւ գրաբար գիտնալու համար ալ հին Պարսկերէն լեզուին եւ քիչ թէ շատ պատմութեան գիտակ եւ տեղեկ ըլլալու է. մանաւանդ բանասէրներու համար անհրաժեշտ է այս:

Օրինակով մը բացատրեմ.

Եղիշէի առաջին յեղանակին մէջ այս տողերը կը կարդանք. «Մինչեւ ցամաք երկրորդ Յազկերտի արքայից արքայի, զոր եզրտ սատանայ իւր գործակից, եւ զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց եւ երկր զնա իրրեւ զպատկանդարան, զեղեալ նետիւք»:

Ի՞նչ է այս «պատկանդարան»ը. եթէ բառգիրքին զիմնք, պիտի գտնենք, ապահովաբար քովի «զեղեալ նետիւք»էն օգտուելով, «նետ զնելու յարմար տեղ» նշանակութիւնը, իսկ եթէ պարսկերէնի փոքր ինչ ծանօթ լինինք, պիտի գտնենք չրջելով = թիյրտան, այսինքն պատկան = Պէյճան = Պահարան եւ զարան, = թիյր = թիյրտան = ուրեմն պատկանդարան = նետերու պահարան:

Եւ յիշենք անցողակի թէ ո՛րքան սեղմ, կոկիկ եւ զաշն է պարսկերէն «թիյրտան»ը, բաղդատմամբ մեր տափակ, երկար եւ անդաշն «պատկանդարան»ին, եւ անցնելէնք առ այժմ, ուրիշ առթի թողով այս կէտին անդրադառնալ, նշանակելով մեր լեզուին զաշնակութենէ զրկուելուն

պատճառները եւ քննութեան ենթարկել իսկ ի՞նչ է «պատկանդարան»ը պատմական տեսակէտով:

Պարսք ի հնումն երբ պատերազմ հըրատարակէին, աղեղները դարսուած, գետեղուած էին տապանի ձեւով կամ սապաթէ մեծ ամաններու մէջ որոշ քանակով, անձնիւր զինուոր մէկ մէկ հատ կ'առնէր բաւականաչափ նետերով եւ կերթար ի րազմ. Պատերազմէ վերադարձին դարձեալ անձնիւր զինուոր կը բերէր կը դարսէր այդ պահարաններու մէջ իր աղեղն ընդ հսկողութեամբ սպայից, եւ քանի՜ աման պարապ մնար, այդ պակասը նշանէր զօրաց կոտորման կամ գերեվարութեան. զօրահանութեան հին սխալեմն այս էր:

Ուրիշ օրինակ մը.

Վեր առնենք «վատախտատակ» բառը՝ եւ զիմնք բառգիրքին. հոն պիտի գտնենք «Տարաբաղդ» եւ «Աստղը թշուառ» նշանակութիւնը, պարսկերէն պէտախթէր, որ բաւական չիտակ հասկցուած է, իսկ «վատախտատակ առնել» բային, որուն իբր թէ նշանակութիւն տրուած է «նեղը խօթել, տակն ու վրայ ընել», յիշաւ բոլորովին տակն ու վրայ եղած եւ նեղը դրուած է նշանակութիւնը:

Պարսկաստան՝ օտարութիւնն եւ աքսորը վատախտարք (վատ աստղ) = Պէտախթէրի կը վերագրէր, զժախտութեան գերադրականը կը նկատէր, ինչպէս որ Արաքն ալ ճամբորդութիւնը զժողքէն մաս մը կը նկատէ — եւ ի դէպ յիշել անցողակի, Ապքերոնեան թերակղզին, նաւթի աշխարհը, այժմու ծաղկեալ Բաքուն, էր երեւմն Պարսկաստանի Սիպիրն էր, աքսորավայրն էր, եւ դատաւարտեալներն հոն կը զրկուէին, ուրեմն վատախտարակ առնել կը նշանակէ «օտար աստղի տակ զրկել = աքսորել»:

Կը տեսնէք, յարգելի Գազրի՛կ, քիչ շատ պարսկերէնի հմտութիւնն ո՛րքան կը նըպաստէ մեր հին դասական լեզուն ճիշտ հասկնալու. եւ բոլորովին կը ձայնակցիմ ձեզ, երբ պէտքը կը զգաք մեր իսկ միջոցներով մեր հին լեզուով զբաղելու, փոխանակ օտար եւ հեռաւոր եւ չատ հեղ

վարկպարազի արեւելագէտներէ յուսարա-
նոսթիւններ մուրալու, որք ինչ եւ լինին
չեն կարող մեզ հասնելու, քանի որ մենք
մեր տան մէջ ենք, պայմանաւ որ կամք
ունենանք հնոյն վարագոյրը խնամով վեր-
ցնելու, եւ քիչ մը ջիւղ ու կորով դնելու
մեր ուսումնասիրութեանց եւ հետազո-
տութեանց մէջ:

Կարծեմ քիչ խօսքով կրցայ բացատ-
րել թէ մեր դասական հին լեզուն, գրա-
բարը, լաւ հասկնալու համար Պարսկերէնի
հմտութիւնը կարիք մ'է:

Գալսով ձեր սա տողերուն. «Եթէ կ'ու-
ղենք որ կարելի եղածին չափ Հայ լեզուն
իր տարրին եւ կալուածին մէջ մնայ,
պէտք է աշխարհաբարի փողով յարութիւն
տանք մեռած լեզուին»:

Ուղիղ չեմ գտներ ձեր սոյն վարկածը,
վասն զի աշխարհաբարով գրաբարին յա-
րութիւն տալ կարելի չէ, ո՛չ փողով եւ
ոչ ալ շեփորով. անկարելի է այդ, բնա-
կանին դէմ երթալ է, եւ դուք անգի-
տակցաբար կը թշնամանէք զրաբարը, «մե-
ռած լեզու» կոչելով զայն. բայց գոնէ
դո՛ւք բաւական խղճամբիտ կ'երեւիք մե-
ռած կոչելով, մինչդեռ մեր Արեւելեան գը-
րագէտներն, անուն եւ հոչակ ունեցող
պարոններ, մինչեւ իսկ «ստակած դիակ»
կոչելու եւ որակելու ապերաստութիւնն
ու ապերախտութիւնն ունեցան: Իսկ եթէ
այս մասին ուղէք իմ համոզումն իմանալ,
աւաստիկ երկու բառով եւ օրինակով յայտ-
նեմ ձեզ:

Հայր մը ունէինք պատուական, փոր-
ձառու, հարուստ շէն ու շող. զմեզ՝ իր
ձագուկներն՝ առաջ բերաւ, խնամեց,
մնոց, ձերբազատեց, կրթեց, իր պաշ-
տօնը կատարեց եւ գործէ քաշուեցաւ,
բայց թողուց մեզ ակնածելի դրամազուխ
մը, ստուար դանձ մը, «գնացէ՛ք դուք
եւս ձեր կարգին, այդ գանձը ճոխացու-
ցէ՛ք» ըսաւ: Մեր այդ պաշտելի խնկելի
հայրը զրաբարն է, իսկ մենք իր ուշիմ
եւ ձեռնհաս ձագուկներն, աշխարհաբարն
ենք. անիկայ իր շրջանը բոլորեց, այժմ
կարգը մերն է որ նորա թողած հարս-
տութիւնը բարւոք կառավարենք, արդիւ-

նաւորենք եւ աւելցնենք, եւ միշտ իրեն
հանգէպ պատկառով վերաբերուելով անոր
խորհուրդներէն օգտուինք, եւ իր պահած
գանձերն յերեւան հանե՛նք եւ մեր գոր-
ծերն ընդարձակե՛նք, քանի որ կեանքի
պայմանները փոխուած եւ նորանոր պէտ-
քեր կը ծնին օր օրի: Հիմա պէտք է որ
աշխարհաբարն իր դերն ստանձնէ լեզուի
բարեփոխման եւ զարգացման մէջ լիուլի,
եւ իւր դիրքն հաստատուի, եւ ինքնիշխան
ու ազատ վեհապետն ըլլայ, վասն զի ան
է տիրապետող տարրը. բայց ասիկա ալ
աստիճանաւոր զարգացմամբ կ'ըլլայ, ոչ
թէ յախուռն, սանձարձակ եւ քմահաճոյ-
քով կատարուած անիմաստ եւ անխոր-
հուրդ փորձերով: Դրադէտը դպրութեան
ոստիկանն է, եւ պաշտօն ունի ի կարգ
հրաւիրելու երբ անկարգութիւն տեղի ու-
նենայ: Ես գրաբարի եւ աշխարհաբարի
դերն այսպէս կ'ըմբռնեմ:

* Այժմ դառնա՛նք ձեր նոյն յօդուածին
մէջ պարունակեալ թարգմանական մի քա-
նի կէտերուն պատասխանելու.

«Չէի կրնար երեւակայել թէ Հայ աղ-
նուականե՛րը ափսէներու մէջէն խմբովին
կը ճաչէին, որ աւելի ընկերական խոնարհ
դիրքի պատկանողներուն ճաչելակերսն է»
ըսեր էք:

Արդէն ըսած եմ թէ պարսկական սո-
վորութիւնները՝ մեր նիստ ու կացին եւ
բարքերուն վրայ մեծ ազդեցութիւն բերած
էին մեր արքունեաց մէջ եւ աղնուականու-
թեան մէջ:

Նոյն իսկ այժմ վեհ. Շահը գետինը
րաստեոի վրայ բազմած, ձախ ձեռքին
յեցեալ, աջ ձեռքով եւ մատներով կը ճա-
չէ ծանրարժէք սկուտեղներու մէջ, իրմէ
յեռոյ նախարարներն եւ աւագանին նոյն
պայմաններով, եւ յետոյ պաշտօնեաները
եւ հուսկ ապա աւելցածներն ալ սպասա-
ւորները կը ճաչեն, իւրաքանչիւր դասա-
կարգ իրենց յատուկ սկուտեղներու, մա-
տուցարաններու մէջ, Հայոց արքունիքն
ալ, աղնուականութիւնն ալ, միջնակարգն
ալ սոյն դրութեան կը հետեւէին, տեսակ
մը ընկերական դիրք, բայց ամեն դասա-
կարգ ըստ պատկանելոյն:

Իսկ գալով իմ թարգմանած «ուղիղ»ին զոր դուք եւ ձեզ հետ շատեր սխալմամբ «ուղիղ» հասկցեր էիք, «Ուղիղին ձեր առաջարկած ստուգաբանութիւնը կը կարծեմ թէ ընդունելութիւն չպիտի գտնէ» ըսեր էք. ես ստուգաբանութիւն չեմ առաջարկած, այլ սխալ մը ուղղած եմ, «ուղիղ»ը «ուղեղ» կարգացողներուն եւ թարգմանողներուն կողմէ գործուած, վասն զի «ուղիղ»ը զուարակին սգնաշարի, մէջքի փափուկ միսին յատկանիշ, որոշեալ անունն է, պարսկերէն Րասթա կոչուած, շիտակ, ուղիղ նշանակութեամբ. ինչպէս՝ օրինակ՝ ուղիղ փողոց = Րասթա քիւչէ, ուղիղ շուկայ = Րասթա բազար եւն. իսկ անոնք որ «ուղիղ»ը իբրեւ «ուղեղ» կը պնդեն, Հայոց աշխարհի փափկասուն տիկիները կը թշնամանեն Ապացոյց:

Ասկէց 10 — 15 տարի առաջ երբ եւրոպացիք բազմաթիւ չէին ի Պարսկաստան, զուարակին ամբողջ գլուխը (միսը լեզուն եւ ուղեղը) կ'արժէր 6 շահի, այսինքն 30 — 40 փաւա. տասն եւ հինգ դար առաջ ինչպէս կարծել որ գովական բան մը եղած ըլլար այս, եւ ի մանկութենէ Հայ տիկիներն անոնցմով մտած ըլլային, իբր պատուական կերակուր մը մատնանշուած: Այսօր իսկ քէլլէփէզ (զըլուխ եփող)ներու խանութներուն մէջ գոնէ միջին զասակարդի մարդիկ չես տեսներ որ առանց ամօթոյ հոն յաճախեն եւ գլուխ եւ լեզու ուտեն, այլ խեղճ աղքատ դիւղացի մարդիկ որպէս տաք կերակուր կ'անուխէն կուգան կուտեն կը մոկնին: Մինչդեռ Զիւլփէզ (փիլաւ եփող)ներու խանութները ոչխարի միսին «ուղիղ» Րասթաները համաշափութեամբ կտրուած միմեանց վրայ դարսուած կը ցուցադրեն:

Եւ մէջքի փափուկ միսերը, «ուղիղ»ները (Ֆիլէթօ) խորոված կը պատրաստեն իսկոյն, վրան փիլաւ քաշելով կարագով, որ Պարսկաստանի ամենահամեղ եւ ամենալարգի կերակուրն է. իսկ «ուղեղ»ը առաջ կատուներու առաջը կը նետէին, հիմա Եւրոպացիք կ'ուտեն:

Յարգելի Գաղրիկ եթէ Պարսկաստան տեսած ըլլար, իսկոյն եւեթ պիտի համոզուէր «ուղիղ»ի ուղղութեան, եւ «ուղեղ»ին եւ «ուղիղ»ին կիրաման տարբերութիւնն իսկոյն աչքի պիտի զարնէր:

Իբրեւ վերջաբան ըսեմ թէ մի քանի տարիէ ի վեր կ'աշխատիմ Հայ եւ Պարսիկ բառերու զննութեան եւ բաւական ստուար մթերք մը սունիմ. կը փափաքիմ դասաւորելով հրատարակութեան տալ, թերեւս շատ դոյզն չափով օգտուի մեր բանասիրութիւնն անոնցմէ:

Իսկ ձեզ աւելի եռանդ եւ միանշամայն համբերութիւն մաղթելով, կը մնամ յարգանք

ԽԱՐԵԺ ՅԱՐԱՍՏԵԱՆ

Իւարեժ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՐՁԱԳԱՆԳ ԳԱՒԱՌԷՆ⁽¹⁾

Ե՛րբ արդեօք մենք ալ պիտի տեսնենք մեր Տաճարները ժողովուրդին մէջ աւելի ծաւալած և առաւել պայծառ: Ինծի կուգայ թէ՛ այս մասին ժողովուրդէն աւելի մեր եկեղեցականներն են պատասխանատու, մենք հոգեւորականներս եթէ չենք հետաքրքրուիր հոգեւոր բաներով, ժողովուրդէն ինչ ակնկալելու ենք: Ինչո՞ւ մեր բոլոր գրող Հայրերը չեն մասնակցիր Տաճկահայ միակ կրօնաթերթին, ինչո՞ւ Տաճարի մէջ չի խմբուիր ամբողջ Հայ եկեղեցականութիւնը: Եթէ գրելու մէջ միանալ կարելի չըլլար, հապա գործելու մէջ ինչպէ՞ս պիտի միանանք ուրեմն, և եթէ սիրոյ աշակերտները, Բանին

(1) Այնժապէն կարող եւ եռանդուն եկեղեցական մը, Արժ. Տ. Գարեգին քահանայ Պողարեան, խմբագրութեան ուղղուած մասնաւոր նամակի մը մէջ, Թերթիս ծաւալման ցամար ի գործ դրած ջանքերուն վրայ խօսելէ ետքը ներկայ շատ յատկանշական տպերը կը գրէ: Կը յանձնենք մեր Գեր. Հարց եւ Արժ. Եղբարց խորունկ ուշադրութեան:

սպասաւորները՝ միութիւն չունենան. հապա մեր ժողովուրդէն, մեր ազգէն ինչ իրաւունք ունինք միութիւն, համերաշխութիւն սպասելու: Շիտակը Պօլսոյ Համագումարին ալ աստիճանը հասկցուեցաւ, իր ընտրութիւնները իր որոշումները և իր վարչութեան — իմա՛ կրօնականի — գործառնութիւններն ու գործադրութիւնները ըստ բաւականին յայտնուեցան: Պատկառելի և օրինակելի են արգարեաւ Եւդեոմենք ողջամտութիւն, եկեղեցասիրութիւն կը պահանջենք ժողովուրդէն: Ո՛չ օրինապահութիւն, ո՛չ կարգապահութիւն ունինք, ո՛չ գիտութիւն և ո՛չ ալ սէր և միութիւն: Ինչ ունինք իբրեւ յատկանիշ Հայ եկեղեցականութեան:

Եղբայր, գրիչ չունիմ որ պայքար բանամ, լեզու չունիմ որ գոռամ. մեր եկեղեցականութիւնը կը մեռնի՛, մեռած է, ամէնէն բարձրաստիճանէն սկսած մինչև լուսարարներ, հոգի, եռանդ, բարեւոյն նախանձը ցամքած է ի մեզ: Իրաւ ապրուստի հոգը, հացի կուրծ շատերնիս կաշկանդած է, բայց եթէ ճիշդ է որ «հոգի առաւել է քան զմարմին», պարտինք ուրեմն նախ կորսուելու վրայ եզոզ հոգիներնուս վրայ խորհիլ, եւ հաւատալ որ բոլոր մնացածները պիտի շնորհուին մեզի: Նախաձեռնութիւն. ահա մեզի պակասած առաքիւնութիւններէն առաջինը: Մենք կը սպասենք շատ բաներ — և իրաւամբ — մեր վեհաշնորհներէն, գերաշնորհներէն են. ըստ կարգին, բայց ի գուր: Մենք արժանաշնորհներս ալ իրաւ որ ըստ մեծի մասին ապիկար անուաներ ենք, և մեծագոյն մասը այսօր օրապահիկին համար մտածողներ են գուցէ. ապա ուրեմն ուստի՞ քայ մեզ օգնութիւն, ինչ պէտք է որ ընենք ի փրկութիւն մեր հոգւոյն և յօգուտ մեզ յանձնուած հօտին. ըստ իս լուել մեղք է, պէտք է Տաճարը ձայն բարձրացնէ, սթափեցնէ, հրահրէ, թերեւս Բահադու ծունկ չգրած հազարներ կան, թող նոր իմն Եղիա կամ Եսայի Տաճար արձագանգէ հայ սրտերսուն մէջ, թմրած, թուլացած հայ կղերը սարսելու, կմախացած հայ քահանայութեան նոր շունչ, նոր ոգի տալու համար:

* * Տեղւոյս քահանայութիւնը 15 ամսուան մէջ երկու կարեւոր անդամներէ յաւիտենապէս բաժնուած ըլլալուն ցաւն է որ առիթ տուաւ շեշտելու վերի տողերը: 1910 յունուար տմոյ սկիզբն էր որ նորընծաներէ Տ. Մեսրոպ քհնյ. Տէմիրձեանը կարճ հիւանդութենէ մը վերջ — թոքատապէ — հողի յանձնած էինք. այս տարի ալ Ապրիլ 13ին Տ. Եղիշէ քհնյ. Քիլիսլեան ժանտաւտնդի մատնուած ըլլալով, 15 օրուան մէջ հողը յանձնեցինք: Երկուքն ալ անձնուէր և գործուն. եայ պաշտօնեաներ էին՝ Վերջինս 67 տարու էր, և 1873 յունուար 7ին ձեռնադրուած, օծակից էր հանգուցեալ Վեհապետեան Տ. Մկրտիչ Ս. Եպիսկոպոսին: Զերմեռանդ, հաւատացեալ, պարզասէր եկեղեցական մ՞էր, հին բարի քահանայութեան քիթ մը, որ սակայն 40-50 տարիներ իր կարողութեան սահմանին մէջ աշխատած էր իր ժողովրդին հոգեւոր, բարոյական և կրթական զարգացումին համար: Իր ուսումը թէև սահմանափակ, սակայն Ս. Գրոց հմուտ էր, և երեսուն տարիներ իր անսթեքելի և զգածեալ քարոզներով թէ՛ քաղաքիս մէջ և թէ՛ շրջակաները համբաւ ստացած էր: Տակաւին քահանայ չօծուած՝ թարգմանիչ Գէորգ անուամբ ծանօթ էր արդէն: Տեղացիները թրքախօս ըլլալնուն, 1865-75 թուականներուն հոս Բողոքականներու գործունէութեան շրջանին մէջ ժողովուրդը Ս. Գրոց մասին լուսաւորելու համար, Յայսմաւուրքը, Ճաշոցը, Աստուածաշունչը ստէպ թարգմանօրէն ժողովրդին հասկընալի ընելու և Բողոքականաց հետ հակաձառելով Հայ. Եկեղեցւոյ առաքելականութիւնը, աւետարանականութիւնը և ուղղափառութիւնը հասկցնելով բողոքականութեան հանդէպ թումը քաշողներէ մէկն ալ հոգեւոյս Տ. Հայրն եղած էր: 7-8 տարի ուսուցչութիւն ըրած եւ 38 տարիներ քահանայագործութեամբ մեծ ժողովրդականութիւն չահած էր: 1867էն ի վեր բոլոր կրթական ընկերութեանց անդամակցած էր գրեթէ, բայց մասնաւորաբար կանանց Հռիփսիմեանց Պարզասի-

րաց ընկերութեան աշխատակողմներէն էր, թէ՛ իբր հիմնադիր և թէ իբր նախագահ: 1895ի դէպքին առթիւ Պիրէճիկ ղրկուած էր, այդ տեղի Հայոց կրօնափոխութեան վրայ, և այդ սարսափի օրերուն այդպիսի վտանգաւոր պաշտօնէ մը ոչ միայն չէր խուսափած, այլև սիրով փութացած և յաջողութեամբ վերադարձած էր: Զերմ աղօթող մը ըլլալուն, չէ եղած ծանր հիւանդ մը որուն չհրաւիրէին Տ. Եղիշէ Հայրը: Թաղումը կատարուեցաւ հանդիսաւորապէս, ժողովուրդը ձեռքերուն վրայ տարաւ հանդուցեղոյն դագաղը մինչև վերջին հանգստարանը: Հանգիստ իր երջանիկ հոգւոյն:

Կը լսենք թէ նոր քահանաներու պատրաստութեան համար խորհողներ կան, բայց պիտի գտնուին արդեօք արժանաւոր քահանայացիներ, և ո՞ր պիտի կրթուին: Ամբողջ Հայ ազգը այսօր հոգ ըրած ունի՞ ընծայացուներ պատրաստելու համար, ո՞վ պիտի պատրաստէ և ո՞ր, չարժեք արդեօք խորհիլ, և կա՞յ աւելի այժմէական քան զայս՝ Հայ Եկեղեցւոյ համար կարեւոր քահանայ, ուսուցիչ, քարոզիչ, ահա երբեակ և հրամայողական պահանջը Հայ քրիստոնէութեան:

ԳԱՐԵԳԻՆ ԲԷՆԵ. ՊՕՂԱՐԵԱՆ

Այնքապ

ԼՔՈՒԱԾ ՎԱՆՔ ՄԸ

Սասնոյ Փսանաց գաւառի Գոմք գիւղի մօտ, Մարաթուկ լեռան ստորոտը, կոնաձեւ բլուրի մը քարուտ կողքին վրայ կը գտնուի Մատեն Առաքելոյ վանքը, որ կառուցուած կը թուի տասներորդ դարու կիսուն:

Այս գիւղեցիկ միջնաստանին անեցալ պատմական շրջանը զանց ընելով, հիմայ կը շատանամ անոր ներկայ անկեալ վիճակը պարզելով Տաճարի միջոցաւ ամէն անոնց, որոնք վանքերու ախուր կեանքով կը հետաքրքրուին:

Մատեն Առաքելոյ վանքին ներկայ վիճակը վերջին ծայր թշուառ ու արգա-

հատելի է, ըլլայ նիւթական ըլլայ քարոյական տեսակէտով: Թէև վանքապատկան քանի մը կտոր մշակելի հողեր կան, բայց անոնց չահագործումը տնուոր Հայ Մրիպաներու տրամադրութեան յանձնուած ըլլալով, վանքը սպասուած արդիւնքը չի կրնար ստանալ անոնցմէ: Հետեւաբար վանքին ապրուստի գլխաւոր աղբիւրն է թեմական «Պտղի» կոչուած տուրքը, որուն տարեկան հասոյթի քանակը մօտաւորապէս կը հասնի 100 կոտ կլկլի, 150 կոտ կորեկի եւ 50 տիկճոր իւղի: Թեմական ժողովուրդն ալ ընդհանուր առմամբ անտանելի աղքատութեան մը մասնուած ըլլալուն պատճառաւ, քանի մը տարիէ ի վեր գրեթէ բոլորովին կը զլանայ վճարել իր այս թեմական տուրքը՝ ի պայժառութիւն վանքին:

Այսպէս, վանքը ներկայիս մէջ նիւթական եւ քարոյական կարողութենէ յամենայնի զո՛ւրկ եւ մեծագումար պարտքերու տակ կքած ըլլալով, հազիւ 6-10 հողիէ բաղկացեալ պորտաբոյծ միաբանութիւն մը միայն կը պահէ իր ներքին գործերուն մատակարարութեան համար:

Վանքին նախորդ վանահայրն էր ասկէ երկու տարի առաջ վախճանող Տ. Պետրոս վարդ. Աստուածատուրեան, որ Կարմիր Սուլթանի մանուածապատ դիւանագիտական մահաբոյր արարքներուն ու քրդական բիրտ քաղաքականութեան առերես համակերպող մը ըլլալով, յաջողած էր զերծ պահել Փսանաց գաւառի Հայ ժողովուրդը 95-96ի ահռելի ջարդերէն: Իսկ այժմեան վանահայրն է բնիկ Սասունցի եւ Մշոյ Ս. Կարապետ վանքին միաբաններէն՝ Տ. Ստեփան վ. Պաղտասարեան, ճշմարիտ ազգասէր, անկեղծ գործիչ եւ քաջ զինավարժ, սր իր ժողովրդական եւ հեղահամայն բնաւորութեամբ շատ սիրելի անձնաւորութիւն մը դարձած է բոլոր թեմական համայնքին:

Ստեփան վ. թէ՛ վանքին ու թէ՛ ժողովրդեան յառաջդիմութեան համար աննախընթաց փափաքող մը եւ մեծագոյն գործող մը ըլլալով, խիստ զովելի աշխատասիրութիւն մը ցոյց կուտայ իր միա-

մեայ ազգագրութեան գործունէութեան մէջ : Ն. Գերապատուութիւնը բարձր ուսումնական մը չըլլալով հանդերձ, կը սիրէ ուսումն ու գիտութիւնը, այնպէս որ իր անդուլ ջանքերուն շնորհիւ, վերջերս յաջողեցաւ Փասնաց զաւառի կարգ մը դիւղերուն մէջ տեղական աղքատիկ միջոցներով քանի մը դպրոցներ բանալ ուղղակի իր հսկողութեան տակ :


Վանքին մէջ ալ դպրոց մը բանալու մտադրութիւնն ունի. սակայն, ինչպէս ըսի, վանքը կոնաձեւ եւ քարաքարկառ ըլլորի մը բարձր գաղաթիւն վրայ շինուելուն համար, անոր խմելու ջուրն իսկ երկու ժամ հեռաւորութեամբ, ստորերկրեայ հողէ ջրմուղներու միջոցաւ կուգայ, ահագին ժայռերու եւ ապառաժներու մէջէն անցնելով : Այդ ջրմուղները երկար տարիներու ընթացքին մէջ բոլորովին խորտակուած ըլլալով, այժմ վանքը զրկուած է կաթիլ մը խմելու ջուրէն անդամ, եւ վերանորոգելու դրամական կարողութիւն ալ կը պակսի : Հետեւաբար եթէ այսպէս անխնամ թողուի, մօտ ժամակուսան մէջ վանքին արդէն խարխուլ պարիսպներն ալ պիտի փլչին, որ աստն շինելն այլ եւս անկարելի պիտի դառնայ Սասունցիին համար :

Արդ, նկատելով որ այս վանքին դաւաւոր հիմնարկութիւնը մեծ ազդեցութիւն ունեցած է եւ ունի Սասունցի Հայ հասարակութեան ազգային եւ կրօնական զգացումներուն վրայ, Պոլսոյ Պատրիարքարանի, Հ. Բ. Ը. Միութեան եւ ազգային անհատական բարերարներու աջակողմը ուշադրութեանը կը յանձնենք այս կարեւոր կէտը, Մատեն առաքելոյ վանքին նորոգութեան համար 100-150 ոսկիի դրամական խնդիրը, խնդրելով որ յանուն Սասնոյ բազմաչարչար Հայութեան, բարեհաճին իրենց նիւթական աջակցութիւնը ընծայել տեղւոյս առաջնորդարանին միջոցաւ :

ՄԿՐՏԻՉ ՔԷՆՅ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ցաւ :

Հայկայ



ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(1)

Բ.

Իր միջամտութեան աննպաստ արդեւնքէն զայրացած, Յուլիոսի մայրը որոշեց միմիայն իր մայրական բնազդին հետեւել : Վաղեց դառաւ իր զաւակը, եւ խոստացաւ անոր հայթայթել իրեն պէտք եղած դրամը, առանց հօրը տեղեկութիւն տալու, պայմանաւ սր ինքը՝ Յուլիոս՝ երթայ ներսում խնդրէ հօրմէն : Երիտասարդը հաւանեցաւ : Ժիւլէնալ կնոջը եւ զաւակին գլխուն յանդիմանութեան տարափ մը տեղացնելէ ետքը, հաւանեցաւ քաղցր վարմունք մը ցոյց տալու, պայմանաւ որ Յուլիոս վերջ տայ իր զեղիւ եւ անկանոն կեանքին, եւ ամուսնանայ աղջկանը հետ հարուստ վտաճառականի մը, որուն հաւանութիւնը ձեռք բերել ինքը յանձն կ'առնէր :

— Զաւակիս դրամ պիտի տամ, աւելցուց, կնոջը համար օժիտի դուստր իսկ պիտի յանձնեմ, եթէ յօժարի ապագային պարկեշտ եւ կանոնաւոր կեանք մը վարել : Այս պայմաններով կը ներեմ իրեն : Բայց եթէ մերժէ, ա՛լ բան մը չի կրնար յուսալ ինձմէ : առջին անգամ որ դարձեալ խենդութիւն մը ընէ, զինքը քաղաքային իշխանութեանց ձեռքը կը յանձնեմ :

Յուլիոս այս պայմանները ընդունեց եւ ազատութիւնը վերստացաւ, խոստացաւ ամուսնանալ եւ չափաւորութեան սահմանին մէջ գնել իր կեանքը, առանց՝ սակայն՝ այդ խոստումը բռնելու ներքին դիտաւորութեան :

Յաջորդ առաւել մայրն իրեն յանձնեց խոստացած զօհարեղէնները, զորս իր ամուսինէն զոգցել էր :

— Ա՛ռ, ծախէ՛ ասոնք, ըսաւ, բայց ո՛չ այս քաղաքին մէջ, եւ ատունց դրամը ուղածիդ պէս գործածէ : Կարելին պիտի ընեմ այս զոգութիւնը ծածկելու համար, եւ եթէ երբեք յայտնուի, մեր գերիներէն մէկուն վրայ պիտի ձգեմ :

(1) Շար. տես Ժիւլ 22, 23, 24, 25 :

Այս խօսքերը վրդովում ձգեցին Յուլիոսի հոգիին մէջ : Սարսափահար մնաց մօրը ըրածէն , եւ առանց ձեռք դպցնելու այդ թանկագին քարերուն , դահալէժ կերպով մը դուրս նետուեցաւ տունէն :

Ինչո՞ւ կը մեկնէր եւ ո՞ւր կ'երթար . ինք ալ չէր գիտեր . բայց քաղաքէն դուրս ելաւ եւ երկար ժամանակ շարունակեց իր ճամբան , առանձնութիւնը փնտռելով՝ իր անցեալին վրայ խորհրդածելու եւ ապագային վրայ մտածելու համար : Տիանայի (Անահիտ) նուիրուած անտառի մը նսեմաստուեր թաւուտքին մէջ քաշուած , ուղեց աղօթել չաստուածուհւոյն , բայց նշմարեց որ ա'լ երկար ատենէ ի վեր չէր հաւատար իր երկրին աստուածներուն : Ի՞նչ օղուտ պիտի քաղէր անոնց աղօթելով : Անոնք ոեւէ սփոփանք չպիտի բերէին իրեն , բա՛ն մը չէին կրնաք ընել իրեն : Բայց եթէ անոնք անկարող էին սփոփելու զինքն իր վիշտերուն մէջ , ո՞վ պիտի կրնար ընել այդ բանը :

Տարօրինակ , անհեթեթ , հրէշային թուեցաւ իրեն՝ այսպիսի մտածումներու վրայ կանգ առնել : Մութը լեցնել կը թուէր իր հոգին : Եւ սակայն ուրիշ միջոց չէր մնացած իրեն , եթէ ոչ ինքն իր մէջ ամբողջութիւն , եւ հարցափորձել ինքզինքը՝ իր կեանքին բոլոր գլխաւոր գործերուն վրայ : Հետեւապէս սկսաւ իր խղճի քննութիւնն ընել : Եւ այն ատեն նշմարեց թէ գէշ գործեր ըրած էր , եւ թէ — ինչ որ երբեք կասկածած չէր — ապուշի մը վարմունքն ունեցած էր . ո՞ր չար ոգին կրցած էր զինքը մղել այս վատթար ճամբուն մէջ . ինչո՞ւ կորսնցուցած էր իր կեանքի զարուհի ցոփութիւններու մէջ...

Այս մտածումները զինքը չէին միտթարեր բնաւ : Մինչեւ այն օրը զթասիրտ հայր մը եւ գորովալիր մայր մը ունեցած էր , եւ առանց բարեկամի ալ չէր մնացած : Բայց այսօր միտակ էր , լքուած , ամբողջ աշխարհի մէջ , Ա'լ ոչ մէկը կը սիրէր , եւ բեռ էր ամենուն վրայ : Խոչընդոտներ յարուցած էր իւրաքանչիւրին կեանքին մէջ , գգաթութիւն ձգած էր հօրն եւ մօրը միջեւ . աշխարհի չորս հովերուն

ցրուած էր այն հարստութիւնը զոր իր հայրը դիզած էր ամբողջ կեանքին մէջ , յարատեւ , շարունակական աշխատութեամբ . իր բարեկամներուն համար արհամարհելի եւ վտանգաւոր մրցակից մը եղած էր . կրնա՞ր տարօրինակ համարել , ուրեմն , եթէ ամենքն ալ իր մահուան բաղձային , ինչպէս ինքը կ'ենթադրէր :

Այս բոլոր մտածումներուն մէջ յանկարծ միտքն ինկաւ Պամփիլիոսի յիշատակը : Յուզումով յիշեց թէ անիկա ո՞ր աստիճան սիրով կը հրաւիրէր զինքը Բերիտոնեաներու համայնքին մէջ , խորհուրդ տալով իրեն՝ ամէն բան լքել , ինքզինքը բոլորովին իր եղբայրներուն նուիրելու համար : Ուստի ջլերմ բաղձանք մը ունեցաւ անոր քով երթալու : Բայց անմիջապէս ընկրկեցաւ այս մտածումին առջեւ , եւ վերսկսաւ խորհիլ իր յուսահատական կայսրութեան վրայ : Չէր կրնար հանդուրժել ա'լ ո'չ մէկէն սիրուելու դաւաժարին , Հայր , մայր , բարեկամ , այլ եւս ամենաչնչին համակրանք մը չէին կրնար ունենալ իրեն համար , եւ հաւանաբար իր մահուան միայն կը բաղձային : Բայց ի՞նքը . ինքը կը սիրէ՞ր մէկը , Ո'չ : Չէր համակրիր իր բարեկամներէն ոչ մէկուն , բոլորն ալ իր մրցակիցներն էին , եւ վիշտ չպիտի իմանային իր դժբախդութիւնները լսելով : Իսկ հայրը , ո՞հ , անիկա ոչ միայն չէր սիրեր , այլ դրապէս կ'ատէր զինքը , եւ ո՞ւր էր թէ ատէր միայն . անիկա իր մահուան կը բաղձար :

— Այո՛ , այս այսպէս է , կ'ըսէր ինքն իրեն . եւ եթէ մարդ չտեսնէր զիս , եթէ ոչ որ կարենար երեւան հանել իմ ոճիրս , ի՞նչ պիտի ընէի ես արդեօք . ապահովաբար չպիտի վարանէի զինքն սպաննելու , եւ այս կերպով ազատելու իր բռնաւորութենէն :

Յուլիոս սարսափեցաւ այսպիսի եզրակացութեան մը յանգիլը տեսնելով :

— Մայրս , անոր վրայ կը խղճամ , բայց զայն ալ չեմ սիրեր : Բացարձակապէս անտարբեր եմ անոր նկատմամբ ալ . իրմէ փնտռածս այն է միայն որ իր օժան-

դակութիւնն ապահովեմ ի նպաստ ինձ :
Վայրի գաղա՞ն մ'եմ ուրեմն ես : Այո՛ ,
վայրի գաղան մը , զոր երկար ատենէ
ի վեր ձեռք անցընել ուզէր ամէն ոք :
Միակ տարբերութիւնը որ կայ վայրի գա-
ղանի մը եւ իմ միջեւ , սա է որ ես , եթէ
սզեմ , կրնամ վերջ տալ այս անիծեալ
կեանքին : Վայրի գաղանէն տարբերու-
թիւն մը ունիմ , այո՛ , կրնամ ինքզինքս
սպաննել , կ'ատեմ հայրս , մա՛րդ չեմ որբեր ,
ոչ իսկ մայրս , ապահովաբար ոչ ալ բա-
րեկամներս : Պամբիլիոս թերեւս միակ
մարդն է որ կրցած է համակրութիւնս
գրաւել :

Այն ատեն իր մտածումներն անդրա-
դարձան իր բարեկամին վրայ , իրենց
վերջին տեսակցութեան վրայ , Յիսուսի
խօսքին վրայ զոր կրկնած էր Պամբիլիոս :

«Եկե՛ք ինձի , ո՛վ յոգնածներ ու քեռ-
նաւորներ , եւ ես հոգիի հանգիստը պիտի
ստն ձեզի :»

Արդեօք սաո՞յգ էր ասիկա :

Յանկարծ աչքին առջեւ ներկայացաւ
Պամբիլիոսի զէմքին հիացիկ արտայայ-
տութիւնը , անոր ամենաչնչին շարժում-
ները , եւ ջերմապէս բաղձաց որ կարե-
նայ հաւատալ իր բարեկամին ըսածներուն :

— Պերճանքի եւ շուայտութեան մէջ
փնտռեցի երջանկութիւնը , եւ չգտայ :
Բոլոր անոնք որ ինձի պէս կ'ապրին , դառն
յուսակաբար թիւններու պէտք են թարկուին
ինձ նման : Ամէ՛նքն ալ կը տառապին ,
ամէ՛նքն ալ դժգոհ են : Այլուր կայ միշտ
երջանիկ մարդ մը , որովհետեւ բան մը
չի փոփոխել , բանի մը պէտք չունի : Ինձի
կը յայտարարէ թէ շատեր կան իրեն նը-
ման , թէ ամէն մարդ կրնայ իրեն պէս
ըլլալ , ինչպէս ես , օրինակի համար , հետեւե-
լով իր Տիրոջ սկզբունքներուն :

«Եւ եթէ ճիշտ են այս բոլորը . . . :

«Ստութիւն թէ ճշմարտութիւն , տե-
սակ մը հրապոյր կայ ատոր մէջ որ զիս
իրեն կը ձգէ : պիտի երթամ» :

Այս վերջին բառը՝ «պիտի երթամ» ,
պիտի երթամ» , քանիցս կրկնելով , դուրս
ելաւ թաւուաքէն , հաստատապէս որոշե-
լով որ ա՛լ տուն չդառնայ , եւ քայլերն
ուղղեց դէպ ի Բրիտանիաներու բնակու-
թեան կողմը :

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱԶԳ. ԺՈՂՈՎԸ մեծամասնութիւն
չունեցաւ անցեալ ուրբաթ : Ազգին ներ-
կայ տխուր , ճգնաժամային կացու-
թեան մէջ շատ ցաւալի է ասիկա , եթէ
հետեւանք է երեսփոխան տեարց պարզ
անփութութեան , եւ աւելի՛ ցաւալի՛
եթէ , ինչպէս գրուեցաւ թերթերու մէջ ,
կարգ մը երեսփոխաններ թաքուն նպա-
տակներով իրենք չեկան եւ ուրիշներ ալ
չգալ յորդորեցին , ժողովն ամլութեան
մատնելու համար : Հազիւ 50ի չափ երես-
փոխաններ երկուք ու կէս ժամ կարծիք-
ներ փոխանակեցին ատենական կարգ մը
գործողութեանց վրայ : Այդ կարգին կար-
գացուեցաւ Վարչութեան տեղեկագրու-
թիւնը թէ Երուսաղեմի Պատ. ընտրու-
քեան խնդիրը ուշադրութեան առած է ,
եւ որոշած է հրահանգ տալ Երուսաղէմ ,
ըստ կանոնադրի ընտրութեան ձեռնարկե-
լու համար : Միւս կողմէ յարմար տեսած
է պատուիրակ մը ղրկել եւ աշխարհական
եղեմտից տեսուչ մը կարգել : — Ուշադ-
րաւ էր Ա. Այսօյաճեան էֆ.ի գրաւոր ա-
ռաջարկը՝ Վարչութեան պահանջելու
1911ի եւմտացոյցը , եւ Երուսաղէմի պետ-
ժէն եւ անցեալ տարիներու հաշիւները :
Այս առաջարկը ստիպողութեան հանգա-
մանքով Վարչութեան ղրկուեցաւ : —
Չարսանագիներու ռուսադաւանութիւնն
ընդունելու խնդրոյն մասին Տ. Հմայեակ
Արքեպ.ի հարցումին պատասխանուեցաւ
թէ Տեղապահ Ա.ը շատ ազդու դիմում
ըրած է , եւ լաւագոյն սեպուեցաւ սպասել
յառաջիկայ նիստին , Վարչութեան պատ-
րաստած յիշատակագիրը լսելու համար : —
Օրմանեան Ա.ի խնդրոյն ձգձգումն եւ աս-
նոր երկար ատեն մեկուսացումը արդարու-
թեան եւ խղճի հակառակ նկատեց Հե-
թում էֆ. Սէթեան , եւ առաջարկեց ան-
յապաղ վիճաբանութեան ենթարկել քննիչ
յանձնաժողովին տեղեկագիրը , որոշելու
համար անոր յանցապարտ ըլլալը կամ ոչ :
Ատենապետը պատասխանեց թէ տեղեկա-
գիրը ղրկուած է ատենապետաց դիւանին ,

որ չէ քննած խնդիրը, եւ ներկայ նստա-
լըջանի նախաքննիչ զիւանները չեն աւ-
զեկագրած իրենց ատենապետներուն
ընտրութիւնները, կազմելու համար Ատե-
նապետաց Դիւանը: Միւս կողմէ
Վոսման էֆ. յայտարարեց թէ Ազատ-
մասի մէջ Օրմանեան Ս.ի մասին հրա-
տարակուած soqիւման մը ունէ հերքում
չստացաւ, ո՞վ պիտի գրադի այդ խնդրով:
Հմայեակ Արտմանց էֆ.ի պատասխանին
վրայ, թէ Ատենապետաց Դիւանը ժողո-
վին կողմէ իրեն յանձնուած խնդիրները
միայն քննելու իրաւունք ունի, Վոսման
էֆ. յայտարարեց թէ գրաւոր պիտի տայ
նոր ամբաստանութիւնը: Նոյն նիստին
մէջ որոշուեցաւ. նաեւ խնդիրները լուծե-
լու համար 1880էն ի վեր չգործադրուող
եղանակ մը վերստին կիրարկել, այն է
ունենալ «կարգ խնդրոց» մը՝ այսինքն բո-
լոր խնդիրներուն ցուցակը, որմէ կը
կազմուի իւրաքանչիւր նիստի օրակարգը:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Պատր. տեղապահին եւ
Պոլսոյ փոխանորդ Տ. Սմբատ Վ.ի ներ-
կայացուցած գրերուն վրայ թէ վանական իշ-
խանութիւնն իր հեղինակութիւնը կոր-
սնցնելու վրայ է՝ մէկ քանի վանականնե-
րու անկարգապահ ընթացքին պատճառով,
նաոն ժողովն որոշած է Պատր. ընտրու-
թեան գործողութիւնները կատարելու հը-
րահանգ տալ: Ժողովը Տեղապահ Ս.ին
աջակցելու համար պատուիրակ կարգեց
Հայկ էֆ. Խօճասարեանը, որ այնքան լաւ
ուսումնասիրած է վանքին գործերը, եւ
պիտի կրնայ օգտակար ծառայութիւն մա-
տուցանել:

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԻՄԱՍՏ
«ԹԱԳԻՐ»-ը խորհրդակցութեան առարկայ
եղաւ պատերազմական, զատական եւ
կրթական նախարարութեանց կողմէ, եւ
պիտաւոր կէտերն ընդունուեցան, իսկ
զինուորական խնդիրներու վերաբերեալ
մանրամասնութիւններ անընդունելի դատ-
ուեցան: Ընդունուեցաւ Պատրիարքա-
րաններու վերին հովիտութիւնը վարժա-
րաններու վրայ, որոնք մասնաւոր վար-
ժարաններ չպիտի նկատուին, եւ որոնց
համար Մէարիֆը պիտի բանակցի Պատ-

րիարքարաններու հետ: Մէարիֆի մէջ իւ-
րեւ ուսուցիչ արձանագրուողներ զերծ
պիտի ըլլան զինուորական ծառայութենէ:
Պատրիարքարանները հոգեւոր ներկայա-
ցուցիչներ պիտի ունենան իւրաքանչիւր
զօրաբանակի մէջ: Միւսմաւ ին՝ զինուո-
րական ծառայութիւնը երկու տարուան
ըջեցնելու եւ պէտքի քանակը փոփո-
խելու մասին եղած առաջարկները: Երկ-
րորդական կարեւորութիւն ունեցող կէ-
տեր պզտիկ փոփոխութիւններով ընդուն-
ուած են:

ԿՐԾՆ. ԺՈՂՈՎԸ ԴՆԻ նիստին մէջ
Ադր. Պոլսոյ առաջն. ընտրելի նշանակեց
Տ. Տ. Գնէլ Դալէմբեարեան, Եզնիկ Պա-
պեան եւ Վահրամ Նազարէթեան Վ.նե-
րը, եւ Կեսարիոյ առաջն. ընտրելի՝ Տ. Տ.
Վահան Յակոբեան. Խոսրով Պէհրիկեան
եւ Անանիա Հազարապետեան Վ.ները —
Եզնի գաբուի քարոզիչ նշանակեց Տ. Եղի-
շէ Վ. Դալֆաեանը — Կրօնական ժողովի
զիւանապետ կարգեց Տ. Հմայեակ քնյ.
Էքսէրէեանը, իբրեւ յաջորդ Տ. Տիրայր
Մ. Վ. Մարգարեանի, զոր ժողովին Ատե-
նապետ Ս.ը շնորհաւորեց Բաբերդի ա-
ռաջն. տեղապահ անուանման առթիւ, մի-
եւնոյն ասին գնահատելով անոր տաա-
նամեայ պաշտօնավարութիւնը:

ԲՂԻԷՆ կը գրեն մեզ թէ Առաջնորդ
Տ. Պսակ Վ. որ վեց շաբաթէ ի վեր Կա-
րին կը գտնուէր՝ յարաբերական գործե-
րու կարգադրութեան համար, մեկնած է
իր պաշտօնատեղին, զո՞ն տպաւորութեան
տակ, եւ արժանի ըլլալով Կարնոյ ազգա-
յին եւ պետական պաշտօնական շրջա-
նակներու համակրութեան: Կարնոյ Առաջ-
նորդ Տ. Սմբատ Եպիսկ. ծայրագունութեան
աստիճան տուած է Տ. Պսակ Վ.ի. որ
Բղի դառնալուն սկսած է հովուական մեծ
չըջան մը կատարելու թեմին 50 գիւղե-
րուն մէջ:

ԹԱԼԱՍԷՆ (Կեսարիա) Բարսեղ Տ. Բար-
սեղեան հեռաւոր եւ հարուստ հայրենա-
կիցներուն ուշադրութեան կը ներկայացնէ
նոյն գիւղաքաղաքի վարի թաղի Ս. Թո-
րոս եկեղեցիին — նշանաւոր իր ճարտա-
րապետական շինուածքով — արդի խար-

խուլ վիճակը: «8-10,000 ոսկի արժէք ունեցող այդ փառաւոր շէնքը մօտաւոր ժամանակի մէջ աւերակ վիճակի պիտի հնթարկուի, եթէ չփութացուի անհրաժեշտ նորոգութեան մը, որ ճարտարապետական գնահատութեամբ 300 ոսկի ծախքի կը կարօտի: Վստահ ենք թէ Պոլիս, Եւրոպա, Ամերիկա, Եգիպտոս գաղթող բարեկեցիկ, բարեգործ եւ միեւնոյն ատեն գործնական ոգիի տէր Թալասցիներ պիտի չթողուն որ այնքան փառաւոր շէնք մը փլչի ոչնչանայ, բաղդատաբար պղտիկ ծախքի մը համար: Ուստի հրաւէր կ'ուղղենք փութացնելու իրենց նպաստները՝ Եկեղեցւոյն նորոգութեան նպատակով կազմուած յանձնաժողովին, որ այժմ շուարած կը մնայ տեղացի ժողովրդեան նիւթական աննախանձելի կացութեան հետեւանօք:»

ԱՄԵՐԻԿԱՅԻ Ուէսթ Հոպոքըն քաղաքէն կը գրեն մեզի թէ տեղւոյն հոգեւոր հովիւ Տ. Դաւիթ քահանայ Տ. Աւետիսեան հրաժարած է պաշտօնէն, երիցուհւոյն հիւանդութեան պատճառով, զոր բժիշկներու խորհրդով հարկադրուած է իր երկիրը տանիլ:

ԲԱՅԵՐԴԷՆ մեր թղթակիցը կը գրէ.—

«Բաբերդի միակ վանքը, Ս. Բրիտանիոյ, չնորհիւ վեցամսեայ գրութեան, այսօր բարւոք մատակարարութեան մէջ է. երկամսայ հաշիւները որ վաւերացան Քաղ. Ժողովի կողմէն, տարեկան 120 ոսկի հասոյթ կ'ապահովեն: Նոր վանական նորհուրդ մը ընտրուեցաւ, կը յուսանք թէ նոր զարկ պիտի տրուի վանքին մատակարարութեան: Երիտասարդ մը՝ Պ. Ստեփան Կիրոյեան, կապալի առնել կ'ուղէ վանքին վարելահողերը, զբոսութիւն մը որ ամենէն լաւ պիտի ըլլայ, բայց չենք գիտեր թէ ինչո՞ւ կը վարանին մեր ժողովները, սնորհաբար ծագրուովն առջեւ: Արդարեւ ամէն նորութիւն արգելքի կը բաղխի, բայց մենք կը կարծենք թէ առանց վանական խորհուրդին վանք երթեւեկելու ծախուց, առանց օղիի, միսի, պանիրի, կազի, շաքարի, կղպանքի, աղի եւ այլն տաղտկացուցիչ եւ գայթակղութեան առիթ տուող մանր հաշիւներու, լաւ կ'ըլլայ Աղգ. տօ-

մարներուն մէջ մէկ գրիչով նշանակել 120 ոսկի վանական հասոյթ՝ գանձելի կապալառու (այսինչէն): Կը յուսանք որ այս գրութիւնը ներկայ տարուան մէջ գործադրուի, քանի որ ժողովուրդին կամքն է, խնդիրն այն է միայն որ Աղգ. Պատրիարքարանը իրազեկ ըլլալէ վերջ վճարական հրաման տար գալիք Առաջնորդին, որ այդ մենաստանին մէջ 20 տղայոց համար միայն վարժարան մը բացուի՝ Միացեալ ընկերութեանց հովանաւորութեան ներքեւ. ահա այս է ճշմարիտ բարիքը որով կրնայ վանքը բարեբարել ժողովրդեան:»

Խորասանձեան ընտանիքը, տակաւին իր կրած դառն կորուստի ամենաթարմ տպաւորութեան տակ, նոր եւ շատ ցաւալի կորուստ մ'ալ ունեցաւ շաբթուս յանձին ԿՍՐԱՊԵՏ ԷՖ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆԻ, որ Բշ. օր յանկարծական մահուամբ վերջին շունջն աւանդեց իր վաճառատան մէջ: Այս մահը որքան դառն Խորասանձեան ընտանիքին համար, նոյնքան ցաւալի է Հայ հասարակութեան համար, որուն կարեւոր, դարգացեալ մէկ անդամն էր, եւ աղգ. գործերու մէջ ալ ունէր իր կարեւոր օժանդակութիւնը, իբրեւ անդամ Արմաշի խնամակալութեան, Միացեալ ընկերութեանց հիմնադիր ժողովին: Հազիւ 40 տարեկան, յաւիտենապէս կը փակէ իր աչքերը, նոր սուգով մը համակելով Խորասանձեան պատուական գերդաստանը: Խմբագրութիւնս իր խորին եւ անկեղծ վշտակցութիւնը կը յայտնէ, հանգուցելոյն ընտանեաց, եղբայրներուն, եւ հօրեղբօր՝ Վսեմ. Սաչիկ ԷՖ. Խորասանձեանի, որ իր զաւկին կորուստին ծանրութեան տակ հիւանդագին վիճակ մը ունի:

* Թուղարկաւորութիւնը Եշ. օր կատարուեցաւ Բերայի Ս. Երրորդութեան Եկեղեցիին մէջ, վայելուչ հանդիսաւորութեամբ:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ԲՇՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՀԱՐՄԱՅՐ ԲՇՆՅ. ԿԵՋԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Դաւառաց՝ տարեկան	40 դրու
Արաստահմանի համար »	10 ֆրանկ
Ռուսիա »	4 րոպի
Ամերիկա »	2 օլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ’ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

« ՏԱՃԱՐ » ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐՅԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. փոխա-
նորդ Տ. Աքսէն Բհնյ. Դերձակեան
ԱԶԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Դաֆթեանեան
ԱՅԵԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պողար-
եան
ԱՅԻՐԱՆ ԳԱՐԱՋԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան
ԲԱՐԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԴԱՂԱՏԻՍ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.
Կիւլէսէրեան
ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բհնյ. Թորոսեան
ԶՄԻՒՌՆԻՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դալոստ Բհնյ. Տ.
Դալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թոքատլեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍՊԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տատեայի
ՈՒՇԱԲ. — Կարապետ էֆ. Քէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱՆԸՔՔՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլուրեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Մ.
Եպիսկ. Կէօմրիւքճեան
ՌՔՈՒՄՃՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրժ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Դէորդ Ծ.
Վրդ. Ասլանեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաշեան
ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաշեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուֆանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմիսիոս Բհնյ. Տրէզ-
եան
ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Դէորդ Բհնյ. Թէրզեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմա-
պետ Բհնյ. Բիպարեան
ՔԶԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան
ՖՐԷՉՆՕ. — Յակոբ էֆ. Նշիեան

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅԻՆՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

ԱՌՁԵՈՒՆ ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ

Կը պարունակէ 1. ճոխ բառադումար մը ֆրանս. լեզուի, նշանակութիւնները ի հարկին ֆրանս. օրինակներով բացայայտուած. 2. Արհեստական, դիտական եւ գրական հազարաւոր նորաբանութիւններ. 3. Նոր փոխառութիւններ եւ պատշաճեցումներ հայկազեան բառագիրքէ: 4. Բառագիրք մը ֆրանսերէնի մէջ գործածուած լատին, յոյն եւ օտարաբարբառ ասութիւններու: 5. Ֆրանսահայ ճոխ բառացուցակ մը պատահական, աշխարհադրական եւ դիցաբանական անուններու:

Ցարդ հրատարակուած նմանօրինակ բառագրոց վրայ իրական առաւելութիւններով օժտուած է սոյն բառգիրքը՝ պատուաբեր թէ, հեղինակին եւ թէ հրատարակիչներուն (Պալենց եւ Պաղտատեան գրատուններ):

Դին՝ քաղցունէ կազմ՝ 25 դրշ., լաթակազմ՝ 27, կիսակաշի 30, կաշեկազմ 35 դրուշ:

Գ Է Ո Ր Գ Մ Ե Ս Ր Ո Պ

Ո Ւ Ր Ա Ր Տ Ո Ւ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Աւեկն կողմէ գնահատուած)

Փութացէք գնել օրով հետեւ կէսէն աւելին սպառած է արդէն: — 254 էջ, 30 պատկեր, մէկ քարտէս, են: Դին 10 դշ., 2 ու կէս ֆր. 1 բուքլի, կամ կէս տօլար: 5 է աւելի գնողներուն գոհացուցիչ զեղչ: — Դիմել հեղինակին՝ Ատաբազար, և Պոլիս՝ բոլոր գրափաճառներուն: 6—1

ՍՏԱՑՈՒՄԸ ԳԻՐՔԵՐ

ԵՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

ՄԵՐ ԲՈԺՈՔՆԵՐՆ ՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՐՔԸ ԱՆՈՆՑ ՀԱՆԴԷՊ. — Դրեց Ցաքեք Վարդեհեան: — Եղիշէ Թօքչեանի սպաննիչին՝ Կարնոյ բանտէն Պոսդոնի Ազգ լրագրին ուղղուած գրուած թիւնը, այժմ հատորի վերածուած, նոյն թերթին կողմէ տխուր յայտնութիւններ ունի դաշնակցական գործիչներու գործելակերպին դէմ, զոր չի վարանիր «հայաքանդ» կոչել: Յուզումով եւ սարսուռով կարդացուելիք գիրք մը Դին

ԱՐԱՅԱՄ. — Պատկերազարդ չաբաթաթերթ ազգային, գրական, քաղաքական, աշխատակցութեամբ բազմաթիւ թրքահայ զրագէտներու եւ գրագիտահիւններու Ուշագրաւ՝ իր լուրջ պարունակութեամբ եւ չքեղ տպագրութեամբ, կը հրատարակուի Նիւ-Եօքը: Պոլսոյ մէջ դիմել Պապը Ալի Ճատտէսի, թիւ 52, Ասատուրեան տպարան Պ. Լեւոն Լարենցի: Տարեկան բաժնեգին 60 դրշ., վեցամսեայ 30 դրշ., հատը 1 դրշ., հրատարակուեցաւ մինչեւ 7րդ թիւը:

ՆԱՆԹ, կիսամսեայ հանդէս, գրական եւ գեղարուեստական, պատկերազարդ: Արտօնատէր Մ. Պարսամեան: Առաջին թիւէն դատելով՝ խոստանալից պարբերական մը: Տարեկան բաժնեգին՝ Պոլսոյ 40, դաւառաց 45 դրշ., արտասահման 10 ֆր.: Հատը 2 դրշ.:

ԱՊԱՌԱՄ. — Ամսաթերթ. — Ամսօրոյ մէջ Տիար Լեւոն Լանխի խմբագրութեամբ կը հրատարակուի, խոստանալով կարեւոր տեղ մը բռնել գաւառաթերթերու մէջ: Տարեկան բաժնեգին Պոլսոյ համար 25 դրշ.:

ԲԺԻՇԿ. — Ամսաթերթ բժշկական եւ առողջապահական. — Պատկերով տեղ. Վահան Ղաղարեան, Տրապիզոն: Հրատարակուեցաւ 5րդ թիւը (Մայիս):

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Ց. ՏՕՂԱՐԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Համալ Մօլա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ